

5.12. 2011 թվականի դեկտեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2011թ. դեկտեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.12.1. Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Դեկտեմբերին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 146 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 51229 փորձանմուշ:

Երևան քաղաքի մշտական 5 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 513 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.9 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.8 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 16431, ծծմբի երկօքսիդի համար՝ 10725, ազոտի օքսիդների համար՝ 2121, գետնամերձ օզոնի համար՝ 895 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի օքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 16 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 55 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 144 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վանաձոր քաղաքի մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 174 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 144 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ալավերդի քաղաքի մշտական 2 դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 129 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5120, ծծմբի երկօքսիդի համար՝ 1530, ազոտի օքսիդների համար՝ 837, գետնամերձ օզոնի համար՝ 835 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 4.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 18 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 144 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ:

Հրազդան քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 78 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.9 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 3.5 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 72 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 30 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.2 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.8 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 84 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4771, ազոտի օքսիդների համար՝ 779, ծծմբի երկօքսիդի համար՝ 4534 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 95, 72 և 60 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցվել է օդի 90 և փոշու 31 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 710 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական

կոնցենտրացիան ՍԹԿ-ից բարձր է եղել 3.1 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (ձյուն)
վերահսկվող նյութերի պարունակությունը, 2011թ. դեկտեմբեր**

մգ/դմ³

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը	
	10	22
Ջրածնային ցուցիչ (pH)	6.00	5.02
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՍիմ/սմ)	49.9	62.4
Սուլֆատ իոն	1.764	5.976
Քլորիդ իոն	2.278	5.273
Նիտրատ իոն	1.718	8.657
Ամոնիում իոն	0.893	1.112

5.12.2. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Դեկտեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 19 գետերի և Երևանյան լճի 42 դիտակետերում: Վերցված 42 փորձանմուշներում որոշվել է 34-39-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2011թ. դեկտեմբեր

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները											
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	ալյումին (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	երկաթ (ՍԹԿ՝ 0.5 մգ/դմ ³)	մանգան (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	սելեն (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	կադմիում (ՍԹԿ՝ 0.005 մգ/դմ ³)
Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	3.5	-	-	0.100	0.003	-	-	0.053	-	-	-	-
	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	4.8	-	-	-	0.003	0.002	-	-	-	-	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	4.7	-	-	0.050	0.003	0.002	-	0.021	-	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	6.0	0.056	10.511	0.049	0.003	0.003	-	0.020	0.003	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	5.2	-	0.452	0.150	0.005	0.002	-	0.023	0.007	-	-	-
	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	6.1	0.030	-	0.094	0.004	0.002	-	0.018	0.015	-	0.002	-
Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	3.3	-	-	0.058	0.008	-	-	-	-	-	-	-
	10	Գետաբերան	4.5	-	-	0.077	0.005	0.002	-	0.023	0.006	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	4.6	-	-	0.648	0.002	-	-	0.076	0.009	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	4.3	-	0.657	1.346	-	-	1.492	0.427	0.408	3.273	0.002	0.034
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	-	-	-	0.052	0.002	-	-	0.033	-	-	-	-
	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	5.7	-	1.247	0.047	0.002	-	-	0.021	0.002	-	-	-
	17	ք.Իջևանից 1 կմ վերև	4.8	-	-	0.068	0.002	-	-	0.025	0.002	-	-	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	5.2	-	1.277	0.056	0.002	-	-	-	0.002	-	-	-
Գետիկ	19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	3.7	-	-	0.075	-	-	-	-	-	-	-	-
	20	Գետաբերան	4.4	-	-	0.088	-	-	-	-	0.003	-	-	-
Արաքս	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	4.6	0.030	-	0.048	0.010	0.004	-	-	-	-	-	-
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	5.0	0.039	-	0.062	0.014	0.006	-	-	0.005	-	0.003	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	0.105	0.644	-	0.018	0.006	-	0.034	0.002	-	0.004	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	0.108	-	-	0.018	0.007	-	0.044	0.002	-	0.004	-
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	3.4	0.053	-	-	0.013	0.004	-	-	-	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները											
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/դմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/դմ ³)	ալյումին (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	երկաթ (ՍԹԿ՝ 0.5 մգ/դմ ³)	մանգան (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	սելեն (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	կադմիում (ՍԹԿ՝ 0.005 մգ/դմ ³)
Քասախ	47	Գետաբերան	4.3	-	-	0.136	0.019	0.006	-	0.069	0.005	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	5.2	0.027	0.507	-	0.011	0.002	-	0.034	0.002	-	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	5.1	-	-	-	0.016	0.004	-	-	0.002	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	4.0	0.032	1.102	-	0.020	0.013	-	0.018	0.002	-	0.003	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	6.3	0.075	9.976	-	0.014	0.006	-	0.042	0.002	-	0.002	-
	56	Գետաբերան	-	0.058	1.995	-	0.018	0.005	-	0.023	0.002	-	-	-
Մարմարիկ	58	Գետաբերան	5.0	-	-	0.058	-	0.002	-	0.020	0.002	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	3.8	0.094	3.371	-	0.021	0.005	-	-	0.002	-	-	-
Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	3.9	-	-	0.120	0.007	0.002	-	0.026	-	-	-	-
	86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	-	-	-	-	0.006	-	-	-	-	-	-	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	0.005	0.002	-	-	-	-	-	-
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	0.003	-	-	-	-	-	-	
Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	4.7	-	-	-	-	-	-	-	0.002	-	-	-
	90	Գետաբերան	4.5	-	-	-	-	-	-	-	0.005	-	-	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	7.4	0.068	9.143	-	-	-	-	-	0.004	-	0.002	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	4.5	0.036	0.499	0.257	-	-	-	0.354	0.231	0.282	-	-
Որոտան	100	ք.Սիսիանից 1 կմ վերև	4.2	-	-	0.113	0.004	-	-	0.024	0.002	-	-	-
	101	ք.Սիսիանից 1 կմ ներքև	3.5	0.030	0.576	0.056	0.012	0.002	-	0.073	-	-	-	-
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	4.8	-	-	-	0.014	-	-	-	-	-	-	-
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	4.3	0.030	0.576	-	0.016	0.002	-	-	0.002	-	-	-
Երևանյան լիճ	112	Ամրարտակի մոտ	4.0	0.037	0.443	-	0.019	0.006	-	0.018	0.002	-	-	-